

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

«Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ը հաստատելու մասին*

Հիմք ընդունելով «վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 6-րդ, 7-րդ հոդվածները, 16-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ը՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

**ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
16 հունիսի 2005 թ., N 295-Ն**


** Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2005 թ. հունիսի 8-ին:

Քրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 13.07.05 թ. (ՀՀԳՏ N19 (196), 1.08.05):

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2005 թվականի հունիսի 8-ի թիվ 295-Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 18



ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՍԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի (այսուհետ՝ համակարգ) ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրման, համակարգի օպերատորի փոփոխման, համակարգի գործունեության կանոնակարգման մասնակիցների կազմում փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունների ներկայացման, համակարգի գործունեության վերաբերյալ տեղեկությունների հրապարակման ընթացակարգերը և համակարգը բնութագրող չափանիշները:

2. Սույն կանոնակարգը տարածվում է «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «դ» կետով սահմանված հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի օպերատորների վրա:

3. Սույն կանոնակարգը չի տարածվում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներբանկային վճարահաշվարկային համակարգերի վրա:

**ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

4. Կենտրոնական բանկի կողմից սահմանվում են հայաստանյան վճարահաշվարկային համակարգը բնութագրող հետևյալ չափանիշները՝

ա) համակարգի մասնակիցների քանակը երեքից քիչ է.

բ) հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի անվանացանկը, որը ներառում է հետևյալ համակարգերը՝ «ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգ», «ՀՀ կենտրոնական բանկի թղթային եղանակով համախառն վճարումների համակարգ», «ՀՀ կենտրոնական բանկի քլիրինգային հաշվարկների համակարգ», «ՀՀ կենտրոնական բանկի արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ», ««ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգ»:

5. Սույն կանոնակարգի 4-րդ կետով սահմանված չափանիշներից առնվազն մեկը բավարարելու դեպքում համակարգի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրման գործընթացն իրականացվում է սույն կանոնակարգի 4-րդ գլխի համաձայն: Եթե համակարգը չի բավարարում սույն կանոնակարգի 4-րդ կետով սահմանված չափանիշները, ապա համակարգի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրման գործընթացն իրականացվում է սույն կանոնակարգի 3-րդ գլխի համաձայն:

**ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՉՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

6. Հայաստանյան վճարահաշվարկային համակարգ ստեղծելու թույլտվություն ստանալու համար համակարգի օպերատորի կողմից Կենտրոնական բանկ են ներկայացվում «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը:

Համակարգի ստեղծման և գործունեության իրականացման թույլտվություն ստանալու միջնորդագրի ձևը սահմանվում է համաձայն հավելված 1-ի:

Համակարգի մասնակիցների, մասնակիցների միջև պարտավորությունների բաշխման, համակարգի կազմակերպման, կառա-

վարման, գործունեության մասին տեղեկանքի ձևը սահմանվում է համաձայն հավելված 2-ի:

Համակարգի գործունեության տնտեսական ծրագրի ձևը սահմանվում է համաձայն հավելված 3-ի:

Համակարգի օպերատորի ղեկավարների մասին տեղեկանքի ձևը սահմանվում է համաձայն հավելված 4-ի:

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված համակարգի գործունեության կանոնակարգ է համարվում նաև այլ անվանմամբ փաստաթուղթը (փաստաթղթերի փաթեթը), որը բավարարում է «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված կանոնակարգի բովանդակությանը ներկայացվող պահանջները:

Համակարգի մասնակիցների, մասնակիցների միջև պարտավորությունների բաշխման, համակարգի կազմակերպման, կառավարման, գործունեության մասին տեղեկանքը և համակարգի գործունեության կանոնակարգը, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունները կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային կրիչների վրա՝ այդ մասին նշելով միջնորդագրում:

7. Եթե սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված փաստաթղթերը թերի են ներկայացված (ամբողջական չեն կամ առկա են որոշակի թերություններ), Կենտրոնական բանկը, ոչ ուշ, քան փաստաթղթերի ներկայացման 30-րդ օրը, այդ մասին գրավոր տեղեկացնում է համակարգի օպերատորին (այսուհետ՝ հայտատու), որը պարտավոր է տեղեկացմանը հաջորդող տասնօրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել շտկված և (կամ) բացակայող փաստաթղթերը: Վերոնշյալ ժամկետի ընթացքում անհրաժեշտ շտկումների (փաստաթղթերի, նյութերի կամ պարզաբանումների) չներկայացման դեպքում հայաստանյան վճարահաշվարկային համակարգ ստեղծելու թույլտվություն ստանալու հայտը մերժվում է՝ փաստաթղթերը թերի լինելու հիմքով:

8. Կենտրոնական բանկը բավարարում է հայաստանյան վճարահաշվարկային համակարգ ստեղծելու թույլտվություն ստանալու միջնորդագիրը, եթե՝

- ա) պահպանվել են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթները,

բ) բացակայում են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերը:

Հայաստանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորի գործադիր մարմնի ղեկավարը բավարարում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված որակավորման պահանջները, եթե ունի բանկի կամ վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարի որակավորման վկայական:

9. Հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության իրականացման թույլտվություն ստանալու միջնորդագիրը մերժելու դեպքում Կենտրոնական բանկն այդ մասին գրավոր տեղեկացնում է համակարգի օպերատորին նշելով մերժման պատճառները և իրավական հիմքերը: Միջնորդագիրը մերժելու դեպքում համակարգի օպերատորը իրավունք ունի հայաստանյան վճարահաշվարկային համակարգ ստեղծելու նոր միջնորդագիր ներկայացնել Կենտրոնական բանկ ընդհանուր կարգով:

10. Կենտրոնական բանկը կարող է ուժը կորցրած ճանաչել հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության թույլտվությունը, եթե առկա են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հիմքերը: Թույլտվությունը ուժը կորցրած ճանաչելու դեպքում իրականացվում է համապատասխան գրառում սույն կանոնակարգի 16-րդ կետով սահմանված թույլտվությունների գրանցամատյանում:

**ԳԼՈՒԽ 4. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՍԱԴՐՄԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԸ**

11. Սույն կանոնակարգի 4-րդ կետով սահմանված չափանիշներին համապատասխանող համակարգի օպերատորը Կենտրոնական բանկ է ներկայացնում՝

ա) սույն կանոնակարգի 4-րդ կետով սահմանված չափանիշների մեծության վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն հավելված 5-ի,

բ) «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված այլ փաստաթղթերը:

12. Կենտրոնական բանկը տալիս է հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության իրականացման թույլտվությունը, եթե՝

ա) համակարգը բավարարում է սույն կանոնակարգի 4-րդ կետով սահմանված չափանիշները.

բ) բացակայում են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» և «բ» կետերով սահմանված հիմքերը:

13. Միջնորդագրի մերժման դեպքում Կենտրոնական բանկն այդ մասին գրավոր տեղեկացնում է համակարգի օպերատորին՝ նշելով մերժման պատճառները և իրավական հիմքերը: Միջնորդագիրը մերժելու դեպքում օպերատորն իրավունք ունի վճարահաշվարկային համակարգ ստեղծելու նոր միջնորդագիր ներկայացնել ընդհանուր կարգով:

14. Սույն կանոնակարգի 4-րդ կետով սահմանված չափանիշների մեծության փոփոխման կամ համակարգի գործունեության փոփոխման հետևանքով սահմանված չափանիշների մեծությանը չհամապատասխանելու դեպքում համակարգի օպերատորը պարտավոր է համապատասխան փոփոխությունն ուժի մեջ մտնելու պահից մեկշաբաթյա ժամկետում դիմել Կենտրոնական բանկ՝ սույն կանոնակարգի 3-րդ գլխով սահմանված կարգով նոր թույլտվություն ստանալու համար:

15. Սույն գլխով սահմանված ընթացակարգով թույլտվությունը ուժը կորցրած ճանաչելու հիմքերը նույնն են, ինչ սույն կանոնակարգի 10-րդ կետով սահմանված դրույթները:

**ԳԼՈՒԽ 5. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ
ՏՐՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ,
ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԴՐԱՆՑՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ԾԱՆՈթԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿԸ**

16. Կենտրոնական բանկի՝ լիցենզավորման գործընթացով զբաղվող համապատասխան ստորաբաժանման կողմից վարվում է հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվությունների գրանցամատյանը, որում պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները՝

- ա) համակարգի անվանումը,
- բ) Կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշման համարը և ամսաթիվը՝ համակարգ ստեղծելու և գործունեություն իրականացնելու թույլտվություն տալու վերաբերյալ,
- գ) համակարգի օպերատորի անվանումը և գտնվելու վայրը,
- դ) տեղեկություններ՝ գրանցամատյանում փոփոխությունների իրականացման վերաբերյալ:

Թույլտվությունների գրանցամատյանը բաց է համընդհանուր ծանոթացման համար:

Թույլտվությունների գրանցամատյանից այլ անձանց վերաբերյալ տեղեկությունները ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվում են պետական տուրքի վճարման դեպքում՝ 3 օրվա ընթացքում:

Թույլտվությունների գրանցամատյանից իրենց վերաբերյալ տեղեկատվությունը համակարգի մասնակիցներին տրամադրվում է անվճար՝ 3 օրվա ընթացքում:

17. Կենտրոնական բանկի՝ լիցենզավորման գործընթացով զբաղվող համապատասխան ստորաբաժանումը կազմում և վարում է Կենտրոնական բանկի կողմից թույլտվություն ստացած յուրաքանչյուր հայաստանյան վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ անհատական գործ, որին պետք է կարվեն նաև համակարգի գործունեության ընթացքում իրականացվող բոլոր փոփոխությունները:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ, ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

18. Հայաստանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորի փոփոխման համար համակարգի օպերատորը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- ա) համակարգի օպերատորի փոփոխման վերաբերյալ դիմում՝ վավերացված և կնքված օպերատորի գործադիր մարմնի ստորագրությամբ,
- բ) իրավասու մարմնի որոշումը՝ համակարգի օպերատորի փոփոխման վերաբերյալ,
- գ) համակարգի օպերատորի փոփոխման արդյունքում «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապե-

տության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերում կատարված փոփոխությունների մասին տեղեկանք և փոփոխված փաստաթղթերը:

19. Համակարգի գործունեության կանոնակարգում փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացման համար համակարգի օպերատորը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- ա) կանոնակարգում լրացումների և փոփոխությունների իրականացման համար դիմում՝ վավերացված և կնքված օպերատորի գործադիր մարմնի ստորագրությամբ,
- բ) օպերատորի կառավարման իրավասու մարմնի կամ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված գործունեության պայմանագրով կանոնակարգի հաստատման այլ ձև սահմանված լինելու դեպքում՝ այդ կարգով սահմանված ձևով հաստատված որոշումը՝ համակարգի գործունեության կանոնակարգում լրացումների և (կամ) փոփոխությունների իրականացման վերաբերյալ,
- գ) փոփոխված կանոնակարգի պատճենը:

20. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 18-րդ և 19-րդ կետերով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո օրենքով սահմանված ժամկետում տալիս է իր համաձայնությունը կամ մերժում է համաձայնության տրամադրումը: Կենտրոնական բանկի կողմից օրենքով սահմանված ժամկետում դիմումը չմերժելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված:

21. Համակարգի օպերատորի փոփոխման, համակարգի գործունեության կանոնակարգում լրացումներ կամ փոփոխություններ կատարելու՝ Կենտրոնական բանկի կողմից տրված համաձայնության դեպքում հայաստանյան վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ անհատական գործին կցվում են սույն կանոնակարգի 18-րդ և 19-րդ կետերով սահմանված փաստաթղթերը:

22. Կենտրոնական բանկը մերժում է լրացումների կամ փոփոխությունների իրականացումը «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանված դեպքերում:

23. Համակարգի օպերատորի, համակարգի գործունեության կանոնակարգում լրացումների և փոփոխությունների իրակա-

նացման մերժման դեպքում Կենտրոնական բանկը մերժման հիմքերի մասին տեղեկացնում է համակարգի օպերատորին:

24. Համակարգի օպերատորի, համակարգի գործունեության կանոնակարգում լրացումների և փոփոխությունների իրականացման համաձայնությունը համարվում է տրված «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում:

**ԳԼՈՒԽ 7. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՍԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ**

25. Համակարգի մասնակիցների կազմում կատարված փոփոխության մասին համակարգի օպերատորը փոփոխության կատարման պահից հնգօրյա ժամկետում պետք է տեղեկացնի Կենտրոնական բանկին՝ ներկայացնելով սույն կանոնակարգի 6-րդ կետի 3-րդ պարբերությամբ սահմանված համակարգի մասնակիցների, մասնակիցների միջև պարտավորությունների բաշխման, համակարգի կազմակերպման, կառավարման, գործունեության մասին նոր տեղեկանքը: Եթե համակարգի մասնակիցների փոփոխման արդյունքում փոփոխության է ենթարկվում նաև համակարգի գործունեության կանոնակարգը, ապա համակարգի օպերատորը Կենտրոնական բանկ համաձայնեցման պետք է ներկայացնի նաև համակարգի գործունեության կանոնակարգը՝ համաձայն սույն կանոնակարգի 6-րդ գլխով սահմանված ընթացակարգի:

**ԳԼՈՒԽ 8. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ**

26. Համակարգի օպերատորը պարտավոր է առնվազն տարին մեկ անգամ հրապարակել հայաստանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության վերաբերյալ տեղեկություններ (այդ թվում՝ համակարգի մասնակիցների, համակարգի միջոցով իրականացվող գործառնությունների տեսակների, նախորդ տարվա ընթացքում կատարված գործառնությունների ծավալի և քանակի վերաբերյալ տեղեկատվություն):

Հավելված 1

«Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ի

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԻՋՆՈՐԴԱԳՐԻ ՁԵՎ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____ -ին

Համակարգի օպերատորի անվանումը _____

Կազմակերպական-իրավական ձևը _____

Գտնվելու վայրը _____

Գործունեության վայրը _____

Համակարգի անվանումը _____

Վերոնշյալ վճարահաշվարկային ծառայությունների իրականացման համար լիցենզիա կամ թույլտվություն _____

Խնդրում եմ Ձեր թույլտվությունը Հայաստանի Հանրապետությունում _____

(համակարգի անվանումը)

վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության իրականացման համար:

Կից ներկայացնում եմ`

Գործադիր մարմնի տնօրեն՝ _____
(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

Հավելված 2

«Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ի

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ, ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ

1. Համակարգի գործունեության հիմնական նպատակը:
2. Համակարգի մասնակիցները, նրանց պարտավորությունները և դերը համակարգում խմբավորված ըստ յուրաքանչյուր մասնակցի.
 - 2.1. մասնակցի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը և ռեզիդենտությունը,
 - 2.2. նրա դերը (կարգավիճակը) համակարգում (օրինակ՝ հաշվարկային բանկ, պրոցեսինգ իրականացնող մասնակից, վճարային քարտեր թողարկող կամ սպասարկող, այլ):
3. Համակարգի կառավարման բարձրագույն մարմինը (օրինակ՝ համակարգի մասնակիցների ընդհանուր ժողովը, համակարգի օպերատորի կառավարման բարձրագույն մարմինը, այլ):

Հավելված 3

«Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար բույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ի

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Համակարգի գործունեության տնտեսական ծրագիրը կոնկրետ հաշվարկներով, վերլուծություններով և ելակետային տվյալներով հիմնավորված, ծրագրի ներկայացմանը հաջորդող երեք լրիվ ֆինանսական տարիների համար կազմված, վճարահաշվարկային համակարգի տնտեսական գործունեությունը և ներքին կազմակերպական կառուցվածքը նկարագրող և հիմնավորող փաստաթուղթ է: Տնտեսական ծրագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից՝

I. Ընդհանուր դրույթներ

1. համակարգի անվանումը,
2. համակարգի ստեղծման նպատակները (հեռանկարները):

II. Գործունեության հիմնական ուղղությունները

1. գործունեության հիմնական ուղղությունները և դրանց համառոտ բնութագիրը,
2. ապագայում նախատեսվող ծառայությունները:

III. Մարքեթինգային վերլուծություն

1. ոլորտի վերլուծություն (ոլորտի մասնակիցները, հիմնական մրցակիցները),
2. ֆինանսական այն շուկաների նկարագիրը, որոնցում այն պատրաստվում է իրականացնել իր գործունեությունը (հեռանկարային զարգացման միտումները, ռազմավարության հիմնական սկզբունքները, համակարգում հաշվարկների բնագավառում առաջացող ռիսկերի գնահատումը և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումները),
3. հաճախորդների խմբի բնութագիրը և կանխատեսվող թիվը:

IV. Ռազմավարությունը

1. դիրքավորում,
2. խթանման ռազմավարություն,
3. գնային ռազմավարություն,
4. ներդրման ծրագիր:

V. Եկամուտների և ծախսերի մոտավոր հաշվարկը

1. ֆինանսավորման աղբյուրները,
2. առաջիկա 3 տարիների համար նախատեսված եկամուտների և ծախսերի հաշվարկը:

Հավելված 4

«Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ի

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՂԵԿՎԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ

1. Ձբաղեցրած պաշտոնը, դիրքը _____
2. Ընդհանուր տեղեկատվություն _____
 - Անունը, հայրանունը, ազգանունը _____
 - Քաղաքացիությունը _____
3. Կրթություն, որակավորում _____

Ուսումնական հաստատության (այդ թվում՝ դպրոցի) անվանումը	Գտնվելու վայրը	Հաճախումների ժամանակաշրջանը (____ թ-ից մինչև ____ թ.)	Գիտական աստիճանները

4. Աշխատանքային գործունեությունը

N	Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները	Պաշտոնը
1.				
2.				
3.				

5. Այլ տեղեկություններ

Հայտարարություն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 22-ի 2-րդ մասով նախատեսված հիմքերի բացակայության մասին:

Հավաստիացնում եմ, որ սույն տեղեկանքում պարունակվող տեղեկատվությունը ստույգ է և լիակատար: Ես համաձայն եմ Կենտրոնական բանկին տեղեկացնել անձնական, կենսագրական և ֆինանսական տեղեկատվության մեջ տեղի ունեցող կամ ակնկալվող որևէ էական փոփոխության փաստի մասին:

(ստորագրությունը)

(ամսաթիվը)

Հավելված 5

«Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ի

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն տեղեկանքով հավաստիացնում են, որ մեր՝ _____

(համակարգի անվանումը)

համակարգը համապատասխանում է «Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» ՀՀ ԿԲ կանոնակարգ 18-ով սահմանված հայաստանյան վճարահաշվարկային համակարգը բնութագրող հետևյալ չափանիշին կամ չափանիշներին՝

1. համակարգի մասնակիցների քանակը _____

2. համակարգը ներառված է Կենտրոնական բանկի կողմից սահմանված հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի անվանացանկի մեջ _____

(համակարգի անվանումը)

Հավաստիացնում են նաև, որ «Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» ՀՀ ԿԲ կանոնակարգ 18-ով սահմանված հայաստանյան վճարահաշվարկային համակարգը բնութագրող չափանիշներին չհամապատասխանելու դեպքում օրենքով սահմանված ժամկետում և կարգով այդ մասին պետք է տեղեկացնեն Կենտրոնական բանկին:

Գործադիր մարմնի տնօրեն՝ _____

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)